ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՌԱԽՈՍՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ՀՀ ԱՆ ՇՀԱՊՁԲ-15/12-2017/9-1»

ք. Երևան «24» «Մարտի» 2017 թ.

ՀՀ առողջապահության նախարարությունը, ի դեմս ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար Ն.Զուլոյանի, այսուհետ՝ «Գնորդ», մի կողմից, և «Յունիքոմփ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Արմեն Բալդրյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված **հեռախոսներ** /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ)չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ)հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ)պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

3.1.8 Ընել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ **5.033.700 (հինգ միլիոն երեսուներեք հազար յոթ հարյուր)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան դեկտեմբերի 25-ը 2017թ. :

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից Ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6.6 Ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ Վաճառողը Գնորդին է տրամադրում նաև տվյալ խմբաքանակի ապրանքների ծագման երկրի սերտիֆիկատը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ֆինանսական միջոցներ հատկացնելուց հետո՝ համապատասխան համաձայնագրի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.12 Պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ք. Երևան, Կառավարության շենք N 3 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական կարգություն Հ/Հ 900011105013 ՀԿՀՀ 02507171 (ստորագրություն) Կ.Տ.	«Յունիքոմփ» ՓԲԸ Ք.Երևան, Սունդուկյան 12 ա «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ Հ/Հ 2170000102102 1001 ՀԿՀՀ 01815551 (ստորագրություն) Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«24» Մարտի 2017թ. կնքված
N ՀՀ ԱՆ ՇՀԱՊՁԲ-15/12-2017/9-1 ծածկագրով պետական գնման պայմանագրի

Տեխնիկական բնութագիր

Հ/հ	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
1.	Հեռախոս 1	**Yealink Entry Level IP Phone with PoE (SIP-T19P E2)** **Հեռախոսի նկարագրություն** • Առնվազն 1 VoIP գրառում • Զանգի սպասեցման, ձայնի անջատման, խնդրանք չանհանգստացնելու հնարավորություններ • Արագ մեկ հպում համարի հավաքում, թեժ գիծ հնարավորությամբ • Զանգի վերահասցեավորում, զանգի սպասեցնում, փոխանցում • Խմբակային լսում, հաղորդագրություն • Առնվազն 3-կողմանի կոնֆերանսներ • Direct IP զանգահարում առանց SIP-ի • Ամսաթվի և ժամի կարգավորում ձեռքով և ավտոմատ • Dial Plan, XML-բրաուզեր, URL / URI գործողություն • Ներքին հեռախոսագիրք առնվազն 1000 գրառում • XML հեռահար հեռախոսագիրք • Հեռախոսագիրք՝ որոնել / ներմուծել / արտահանել • Զանգի պատմություն՝ կատարված և/կամ ընդունված և/կամ բացթողնված և/կամ փոխանցված զանգերի դիտում **Ձայնային հատկանիշներ** • Երկակի Բարձրախոս AEC-ով • Codecs: G.711(A/μ), G.723, G.729AB, G.726 **Ցանց և անվտանգություն** • SIP v1 (RFC2543), v2 (RFC3261) • IPv4 և IPv6 • Խաչաձև NAT, STUN ռեժիմ • IP մուտքագրում՝ ստատիկ / DHCP / PPPoE • HTTP / HTTPS վեբ սերվեր • ժամն ու ամսաթիվը սինխրոնացվի SNTP-ի օգնությամբ • UDP / TCP / DNS-SRV (RFC 3263) • QoS: 802.1p/Q tagging (VLAN), Layer 3 ToS, DSCP

		• SRTP ձայն • Անվտանգություն (TLS) • HTTPS վկայական • Անվտանգության կազմաձևման ֆայլը AES կոդավորման միջոցով • Իսկության ստուգում օգտագործելով MD5/MD5-sess • IEEE802.1X **Կառավարում** • Կազմաձևում՝ բրաուզեր / հեռախոս / ավտո-դրույթ • Ավտո դրույթ FTP / TFTP / HTTP / HTTPS զանգվածային մշակման • Ավտոմատ դիրքորոշում PnP • Zero-touch SP, TR-069 • Վերադարձ գործարանային կարգաբերումներին, վերագործարկել • Կարգաբերումների արտահանում, համակարգի տեղեկամատյանի փաթեթի հնարավորություններ **Ֆիզիկական նկարագրություն** • Առնվազն 132x64-pixel, գրաֆիկական LCD • Ինտուիտիվ օգտվողի ինտերֆեյս, իկոնկաներով և ծրագրավորվող բանալիներով • Առնվազն ռուսերեն և անգլերեն լեզուների ընտրություն • Զանգահարողի ID անուն, համար • 2xRJ45 10/100M Ethernet պորտ • Առնվազն 29 ստեղներ, այդ թվում առնվազն 4 ծրագրային ստեղներ • 1xRJ9 (4P4C) հեռախոսի լսափողի համար Մատակարարման պահից 1 տարի երաշխիք:
2.	Հեռախոս 2	**Yealink Ultra-elegant Gigabit IP Phone (SIP-T48G)** **Հեռախոսի նկարագրություն** **Հեռախոսը պետք է ունենա՝** • առնվազն 2 Gigabit Ethernet միացման պորտեր • առնվազն 800 x 480 լուսավորվող սենսորային գունավոր էկրան, առնվազն 24 bit գույնի խորություն • USB պորտ, Bluetooth ականջակալի հնարավորությունով՝ միջոցով USB մոդեմով, USB մոդեմը ներառված չէ • առնվազն 16 SIP գրառումներ • Հոսանքի մատակարարում Ethernet պորտով 3-րդ դասի (POE), սնուցման աղբյուրը ներառված չէ • Հեռախոսին միացվող առնվազն մեկ հեռախոսահամարներն արագ հավաքելու համար նախատեսված սարք (expansion module) առնվազն 20 ստեղներով **Ձայնային հատկանիշները** • HD ձայն՝ HD ականջակալ, HD բարձրախոս • Cod ecs: G.722, G.711(A/μ), G.723.1, G.729AB, G.726, GSM, iLBC • Երկակի Բարձրախոս AEC-ով **Հեռախոսի հատկանիշները**

		• Առնվազն 16 VoIP գրառումներ • Զանգի սպասեցման, ձայնի անջատման, խնդրանք չանհանգստացնելու հնարավորություններ • Արագ մեկ հպում համարի հավաքում, թեժ գիծ հնարավորությամբ • Զանգի վերահասցեավորում, զանգի սպասեցնում, փոխանցում • Խմբակային լսում, ահազանգ • Հավաքած համարի կրկնում, հետզանգել, ավտոմատ պատասխանել • Առնվազն 3-կողմանի կոնֆերանսներ • Direct IP զանգահարում առանց SIP-ի • Ամսաթվի և ժամի կարգավորում ձեռքով և ավտոմատ • Dial Plan, XML-բրաուզեր, URL / URI գործողություն **Տեղեկատու** • Ներքին հեռախոսագիրք առնվազն 1000 գրառում • XML / LDAP հեռահար հեռախոսագիրք • Հեռախոսագիրք՝ որոնել / ներմուծել / արտահանել • Զանգերի պատմությունը՝ կատարված և/կամ ընդունված և/կամ բացթողնված և/կամ փոխանցված զանգերի դիտում **Էկրան** • լուսավորվող սենսորային էկրան • զանգը և հախորդագրություն ԼԵԴ ցուցիչով ցուցադրելու հնարավորություն • Էկրանին պաստառի առկայություն • Ինտուիտիվ օգտվողի ինտերֆեյս, իկոնկաներով և ծրագրային բանալիներով (soft keys) • Առնվազն ռուսերեն և անգլերեն լեզուների ընտրություն • Զանգահարողի անվան, հեռախոսահամարի ցուցադրման հնարավորություն **Ֆունկցիոնալ ստեղներ** • Սենսորային էկրանի վրա ունենա առնվազն 29 ստեղներ, արագ զանգ մեկ հպումով • Ունենա առնվազն 7 ֆունկցիոնալ ստեղներ՝ հաղորդագրություն, ականջակալ, զանգի պահում, ձայնի անջատում, զանգի փոխանցում, վերահավաքում, բարձրախոս • Զանգի և խոսակցության ձայնը բարձրացնելու և իջեցնելու հնարավորություն **Ինտերֆեյս** • 2xRJ45 համակարգչային ցանցին միանալու համար • 1xRJ9 (4P4C) պորտ հեռախոսի լսափողի համար • 1XRJ12 (6P6C) EXT պորտ, աջակցում առնվազն 6 ընդլայնման մոդուլներ (Expansion Modules for an attendant console application) **Ցանցի և անվտանգություն** • SIP V1 (RFC2543), V2 (RFC3261) • Խաչաձև NAT, STUN ռեժիմ • IP մուտքագրում՝ ստատիկ / DHCP / PPPoE

		• HTTP / HTTPS վեբ սերվեր • Ժամն ու ամսաթիվը սինխրոնացվի SNTP-ի օգնությամբ • UDP / TCP / DNS-SRV (RFC 3263) • QoS: 802.1p / Q հատկորոշման (VLAN), Շերտ 3 ToS DSCP • SRTP ձայն • Անվտանգություն (TLS) • HTTPS վկայական • Անվտանգության կազմաձևման ֆայլը AES կոդավորման միջոցով • Իսկության ստուգում՝օգտագործելով MD5 / MD5-sess • OpenVPN, IEEE802.1X • IPv4 և IPv6 **Կառավարում** • Կազմաձևում՝ բրաուզեր / հեռախոս / ավտո-դրոյթ • Ավտո դրոյթ FTP / TFTP / HTTP / HTTPS զանգվածային մշակման • Ավտոմատ դիրքորոշում PnP • Zero-touch SP, TR-069 • Հեռախոսի արգելափակում անձնական գաղտնիության պահպանման համար • Վերադարձ գործարանային կարգաբերումներին, վերագործարկել • Կարգաբերումների արտահանում, համակարգի տեղեկամատյանի փաթեթի հնարավորություններ Մատակարարման պահից 1 տարի երաշխիք:
3.	Հեռախոս 3	**Yealink Gigabit Color IP Phone (SIP-T46G)** **Հեռախոսի Նկարագրություն** • Առնվազն 6 VoIP գրառումներ, • Զանգի սպասեցման, ձայնի անջատման, խնդրանք չանհանգստացնելու հնարավորություններ • Արագ մեկ հպում համարի հավաքում, թեժ գիծ հնարավորությամբ • Զանգի վերահասցեավորում, փոխանցում • Զանգահարողի անվան, հեռախոսահամարի ցուցադրման հնարավորություն • Առնվազն 3 կողմանի կոնֆերանսներ • Զանգի և խոսակցության ձայնը բարձրացնելու և իջեցնելու հնարավորություն • Ուղղակի IP զանգահարել առանց SIP-ի • Ներքին հեռախոսագիրք առնվազն 1000 գրառում • Զանգի պատմություն՝ կատարված և/կամ ընդունված և/կամ բացթողնված և/կամ փոխանցված զանգերի դիտում • Ինտուիտիվ օգտվողի ինտերֆեյս • Առնվազն ռուսերեն և անգլերեն լեզուների ընտրություն **Ձայնային հատկանիշներ** • Wideband codec: G.722 • Narrowband codec: G.711μ/A, G.723.1, G.726, G.729AB

		• Երկակի բարձրախոս AEC-ով **Ցանցային Նկարագրություն** • SIP V1 (RFC2543), V2 (RFC3261) • DNS SRV (RFC3263) • Պահուստային սերվերի աջակցություն • Խաչաձև NAT, STUN ռեժիմ • Proxy ռեժիմը և peer-to-peer SIP link mode • IP մուտքագրում՝ ստատիկ / DHCP / PPPoE • Bridge / երթուղիչի ռեժիմում PC պորտի համար • HTTP/HTTPS վեբ սերվեր • DNS հաճախորդ, NAT / DHCP սերվեր **Կառավարում** • Ավտո-դրոյթ FTP / TFTP / HTTP / HTTPS • Ավտոմատ դիրքորոշում PnP • SNMP V1/2, optional, TR069 optional • Կազմաձևում՝ բրաուզեր / հեռախոս / ավտո-դրոյթ • Վերադարձ գործարանային կարգաբերումներին, վերագործարկել • Կարգաբերումների արտահանում, համակարգի տեղեկամատյանի փաթեթի հնարավորություններ • Վերադարձ գործարանային կարգաբերումներին, վերագործարկել • Կարգաբերումների արտահանում, համակարգի տեղեկամատյանի փաթեթի հնարավորություններ **Անվտանգություն** • Բաց VPN, 802.1x, VLAN QoS (802.1pq), LLDP • Անվտանգություն (TLS) • HTTPS վկայական • Իսկության ստուգում օգտագործելով MD5 / MD5-sess • Անվտանգության կազմաձևման ֆայլը AES կոդավորման միջոցով • Հեռախոսի արգելափակում անձնական գաղտնիության պահպանման համար **Ֆիզիկական նկարագրություն** • 2xRJ45 10/100 / 1000Mbps Ethernet պորտ • TI Aries chipset • 4.3" TFT-LCD, առնվազն 480 x 272 pixel, առնվազն 16.7 միլիոն գույներ • Առնվազն 48 ստեղներ, այդ թվում, առնվազն 16 ծրագրավորվող ստեղներով • 1xRJ9 (4P4C) պորտ հեռախոսի լսափողի համար • 1XRJ12 (6P6C) EXT պորտ, աջակցում առնվազն 6 ընդլայնման մոդուլներ (Expansion Modules for an attendant console application) • Power over Ethernet (IEEE 802.3af), սնուցման աղբյուրը ներառված չէ Մատակարարման պահից 1 տարի երաշխիք:

ԳՆՈՐԴ

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն

ք. Երևան, Կառավարության շենք N 3

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 900011105013

ՀՎՀՀ 02507171

(ստորագրություն)

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Յունիքոմփ» ՓԲԸ

Ք.Երևան, Սունդուկյան 12 ա

«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ

Հ/Հ 21700001021021001

ՀՎՀՀ 01815551

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2

«24» Մարտի 2017թ. կնքված

N ՀՀ ԱՆ ՇՀԱՊՁԲ-15/12-2017/9-1 ծածկագրով պետական գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	Գնման ենթակա ապրանքների			Մատակարարման նախընտրելի ժամկետները	ԸՆԴԱՄԵՆԸ	
	անվանումը	չափման միավորը	միավորի գինը /ՀՀ դրամ/	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 30 աշխատանքային օրը	Քանակ	Գումար
1	2	3	4	5	6	7
Ծրագիրը՝ «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (նախարարությունների աշխատակազմերի մասով)»					Բաժին 07 Խումբ 06 Դաս 02 Ծրագիր 04	
1	Հեռախոս 1	հատ	33.300	115	115	3.829.500
2	Հեռախոս 2	հատ	186.600	2	2	373.200
3	Հեռախոս 3	հատ	166.200	5	5	831.000
	Ընդամենը					5.033.700

ԳՆՈՐԴ

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն

ք. Երևան, Կառավարության շենք N 3

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 900011105013

ՀՎՀՀ 02507171

(ստորագրություն)

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Յունիքոմֆի» ՓԲԸ

Ք.Երևան, Սունդուկյան 12 ա

«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ

Հ/Հ 21700001021021001

ՀՎՀՀ 01815551

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 3
«24» Մարտի 2017թ. կնքված
N ՀՀ ԱՆ ՇՀԱՊՁԲ-15/12-2016/9-1 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ընթացքում, այդ թվում	
		1-ին կիսամյակ	9 ամիս
1	Հեռախոս 1		
2	Հեռախոս 2		
3	Հեռախոս 3		
ԸՆԴԱՄԵՆԸ			

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ԳՆՈՐԴ

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարություն
ք. Երևան, Կառավարության շենք N 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ900011105013
ՀԿՀՀ 02507171

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Յունիքոմփ» ՓԲԸ

Ք.Երևան, Սունդուկյան 12 ա
«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ

Հ/Հ 21700001021021001
ՀԿՀՀ 01815551

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 4
«24» Մարտի 2017թ. կնքված
N ՀՀ ԱՆ ՇՀԱՊՁԲ-15/12-2017/9-1 ծածկագրով պետական գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, և
հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«24» մայիս 2017թ. կնքված
N ՀՀ ԱՆ ՇՀԱՊՁԲ-15/12-2017/9-1 ծածկագրով պետական գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ՅՈՒՆԻՔՈՄՓ» ՓԲԸ-Ի ՄԻՋԵՎ 24.03.17թ. ԿՆՔՎԱԾ «ՀՀ ԱՆ ՇՀԱՊՁԲ-15/12-2017/9-1» ԾԱԾԿԱԳՐՈՎ «ՀԵՌԱԽՈՍՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «28» «Սեպտեմբերի» 2017թ.

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար Ն.Զուլոյանի մի կողմից, և «Յունիքոմփ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Ա.Բալդրյանի, մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով 24.03.17թ. կնքված «Հեռախոսների» ձեռքբերման «ՀՀ ԱՆ ՇՀԱՊՁԲ-15/12-2017/9-1» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 9.2 և 9.4 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1.1 Պայմանագրի 4.1 կետի «5.033.700 (հինգ միլիոն երեսուներեք հազար յոթ հարյուր)» բառերը փոխարինել «4.489.750 (չորս միլիոն չորս հարյուր ութսունինը հազար յոթ հարյուր հիսուն)» բառերով:

1.2 Պայմանագրի Հավելված 2-ում՝ «Գնման ժամանակացույց»-ում կատարել փոփոխություն՝ համաձայն սույն Համաձայնագրի Հավելված 1-ի:

1.3 Պայմանագրի Հավելված 3-ում՝ «Վճարման ժամանակացույց»-ում կատարել փոփոխություն՝ համաձայն սույն Համաձայնագրի Հավելված 2-ի:

2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:

3. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

4. Համաձայնագիրը կազմված է 3 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ առողջապահության նախարարություն	«Յունիքոմփ» ՓԲԸ
Ք.Երևան, Կառավարական տուն 3	Ք.Երևան, Սունդուկյան 12 ա
ՀՎՀՀ 02507171	Հ/Հ 21700001021021001
ՀՀ առողջապահության նախարարության	ՀՎՀՀ 01815651
աշխատակազմի ղեկավար Ն.Զուլոյան	Տնօրեն Ա.Բալդրյան
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված 1
«28» «Սեպտեմբերի» 2017թ. կնքված թիվ 1 համաձայնագիր

Հավելված 2
«24» Մարտի 2017թ. կնքված
N ՀՀ ԱՆ ՇՀԱՊՁԲ-15/12-2017/9-1 ծածկագրով պետական գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	Գնման ենթակա ապրանքների անվանումը	չափման միավորը	միավորի գինը /ՀՀ դրամ/	Մատակարարման ժամկետները Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 30 աշխատանքային օրը	ԸՆԴԱՄԵՆԸ Քանակ	Գումար
1	2	3	4	5	6	7
	Ծրագիրը՝ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ				Բաժին 07 Խումբ 06 Դաս 02 Ծրագիր 04	
1	Հեռախոս 1	հատ	31.650	115	115	3.639.750
2	Հեռախոս 2	հատ	140.000	2	2	280.000
3	Հեռախոս 3	հատ	114.000	5	5	570.000
	Ընդամենը					4.489.750

ԳՆՈՐԴ

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարություն
ք. Երևան, Կառավարության շենք N 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն

ՀՎՀՀ 02507174

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Յունիքոմփ» ՓԲԸ

Ք.Երևան, Սունդուկյան 12 ա
«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ

Հ/Հ 217001021021001
ՀՎՀՀ 01815551

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 2
«28» «Սեպտեմբերի» 2017թ. կնքված թիվ 1 համաձայնագիր

Հավելված 3
«24» Մարտի 2017թ. կնքված
N ՀՀ ԱՆ ՇՀԱՊՁԲ-15/12-2017/9-1 ծածկագրով պետական գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ընթացքում, այդ թվում ՀՀ դրամ	
		9 ամիս	Տարի
1	Հեռախոս 1	**1 316 000**	**3 639 750**
2	Հեռախոս 2	**280 000**	**280 000**
3	Հեռախոս 3	**570 000**	**570 000**
ԸՆԴԱՄԵՆԸ		**2 166 000**	**4 489 750**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով*

ԳՆՈՐԴ

Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարություն
ք. Երևան, Կառավարության շենք N 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
ՀՎՀՀ 02507171

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Յունիքոմփ» ՓԲԸ

Ք.Երևան, Սունդուկյան 12 ա
«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
ՀՀ 2170010210210001
ՀՎՀՀ 01815551

/ստորագրություն/
Կ.Տ